

ԼԻԲԱՆԱՆԱՅ ԱՐՈՒԵՏԱԳԵՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՄՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՍԵԱԿԻ ԱՐԺԵՒՐՈՒՄ

30 Յունիս 1997ին լիբանանահայ բոլոր սերունդներուն պատկանող արուեստագետներու խումբ մը կ'որոշէ իր խմբային գրոյցները տեղափոխել «Կարտըն Թաուըր» պանդոկ՝ հիմնական նպատակ ունենալով փորձառութիւններու եւ գաղափարներու փոխանակումը, տարբեր սերունդներու եւ արուեստի բոլոր մարզերու պատկանող արուեստագետներու միջեւ: Այդ թուականէն սկսեալ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐ ԶՍԱՆ Երկուշաբթիներ կը վերածուին լիբանանահայ արուեստագետներու ու մտաւորականութեան աշխուժ ֆորումի: Կանոնաւոր հետեւողականութեամբ ու անկաշկանդ արտայայտութիւններով հոն կ'արծարծուին սփիւռքահայութիւնը յուզող բազմաթիւ խնդիրներ, երբեմն՝ վիճաբանական պոռթկումներով, սակայն միշտ՝ խօսքի բացարձակ ազատութեան սահմանը միացնելով կարծիքներու փոխադարձ յարգանքի սկզբունքին:

Լիբանանահայ արուեստագետներու հաւաքական գրոյցները առիթը կ'ընծայեն գաղափարական այլազան մտածողութեան տեր ու բոլոր շրջանակներու պատկանող անձերու՝ արտայայտելու իրենց կարծիքը եւ տասը տարիներու ընթացքին վերածուելու մտաւորական ինքնուրոյն երեւոյթի մը: Ժամանակի ընթացքին, սկզբնական յայտագիրին վրայ տեղ գտած նիւթերու ծիրը ընդլայնուելով, հետզհետէ կ'ընդգրկէ ազգային, մշակութային ու ընկերային եական հարցեր, որոնց քննարկումը յաճախ կը ստանայ մասնագիտական հանգամանք՝ ներկայացուելով լիբանանցի, սփիւռքահայ ու հայրենի հանրաճանաչ հիւր-գեկուցողներու կողմէ:

Monday Forumի (www.gardentowerhotel.com/MondayForum.htm) կայքէջը իր յղացումէն ի վեր կը շարունակէ գրաւել առաջին տեղը Կուկըլի եւ Եահուի հարիւրաւոր միլիոն հաշուող կայքէջերուն մէջ՝ ներկայացնելով լիբանանահայ բազմաթիւ արուեստագետներու գործերը, կենսագրութիւնն ու քննադատներու արժեւորումը, ինչպէս նաեւ կը պարունակէ ամփոփ արխիւը 420 Երկուշաբթիներու, որոնք եղան մտաւորական հաճոյքի երեկոներ:

Ներկայացուած նիւթերը կարելի է բաժնել երեք գլխաւոր բաժիններու.

- 1.- Արուեստի - նկարչութիւն, երաժշտութիւն, շարժանկար, գրականութիւն, թատրոն, բանաստեղծութիւն, արուեստի քննադատութիւն, լուսանկարչութիւն, ծաղկայարդարման արուեստ:
- 2.- Ազգային ու ընկերային հարցեր - Հայաստան -Սփիւռք փոխ յարաբերութիւններ, ազգային գաղափարախօսութիւն, ինքնութիւն, Հայ Պատ, Ազգային սահմանադրութիւն եւ եկեղեցի: 3.- Արուեստագետներու յուշերու եւ մեծարանքի երեկոներ - Պերճ Ֆազլեան, Չաւէն Խտրճեան, Վարուժան Մարտիրեան, Լիւսի Թիւթիւնճեան, Հուրի Շեքերճեան, Ռոզվարդ Սիւտեռեան, Տիգրան Տատրեան, Լեւոն Վարդան, Գրիգոր Շահինեան:

Իրենց ելոյթներով արդէն իսկ լայն ժողովրդականութիւն վայելող վաստակաւոր բազմաթիւ արուեստագետներ, արուեստաբաններ, քննադատներ, բանաստեղծներ, պատմաբաններ, հասարակական գործիչներ, ակադեմականներ, դերասաններ, իբրեւ հիւր, իրենց յաճախակի մասնակցութեամբ կամ ներկայութեամբ կը ստեղծեն մեծ խանդավառութիւն: Ելոյթներու թուականի շարքով կարելի է յիշատակել հետեւեալ անունները. երաժշտագետ-խմբավար Յարութ Ֆազլեան, հնագետ Ռաֆֆի Չերչեան, արուեստաբան Լեւոն Թորոսեան, ճարտարապետ Սկրտիչ Պուլտուքեան, քանդակագործ Չաւէն Խտրճեան, բանաստեղծ Սաֆօ Արեան, դերասաններ Ժիլիա Զասար եւ Ռիֆաաթ Թարապէյ (Չարենցի արաբերէն մեկնաբանութեամբ), գրագիտուի թամար Տասնապետեան, գեղանկարիչ Շաուրի Շամուն, քննադատ Միշէլ Մաայքի, Հրայր Բազէ, շարժանկարի բեմադրիչ Էտի Չամիչեան, Կարօ Կարապետեան, ակադեմականներ Գեորգ Բրուտեան եւ Հրաչեայ Միրզոյեան, երգիծաբան Արամայիս Սահակեան, փրոֆ. Գեորգ Խրլոպեան, արուեստաբան Շահէն Խաչատրեան, բեմադրիչ Ժալալ Խուրի, բեմադրիչ եւ դերասան Պերճ Ֆազլեան, քանդակագործ Վարուժան Մարտիրեան, գեղանկարիչներ Գրիգոր Նորիկեան եւ Գրիգոր Ակոբեան, բանաստեղծ Գեորգ Էմին, արձակագիր Հրանդ Մաթեւոսեան, ջութակահար ճենտերճեան եղբայրներ, արուեստաբան Մովսէս Հերկելեան, լուսանկարիչներ Վարուժան Սեթեան եւ Յովհաննէս ճերճեան, Ռիշարտ Շահին, Կարօ Զեպպաճեան, գրականագետ Գրիգոր Զեպպեան, Անթուան Ակունճեան, քաղաքական գիտութիւններու մասնագետ Արա Պալեան, Հայաստանի դեսպաններ՝ Արման Նաւասարդեան եւ Արեգ Յովհաննիսեան, գրականագետ Գրիգոր Շահինեան, գրագետ

Ալեքսանտր Նաժժար, Հունգարիոյ հայ համայնքի նախագահ Ալեքս Աւանստեան եւ փրոֆ. Փիթըր Լանկ, արուեստաբան Լեւոն Չուքասզեան, թատերագիր Արման Վարդան, գեղանկարիչ Մարալ Փանոսեան, լրագրողներ Էտի Պողոսեան եւ Մանուէլ Գազանճեան, պատմաբան ու հասարակական գործիչ Կարլէն Դալլաքեան, հասարակական գործիչ Սեպուհ Միճեան, գեղանկարչուհի Անիթա Թութիկեան, պատմաբան Արա Սանճեան, իրաւաբան Գասպար Տերտերեան, գրագետ Թորոս Թորանեան եւ այլն: Յիշուած անուններէն շատեր իրենց բազմաթիւ ելոյթներով կամ ներկայութեամբ կարելոր ներդրում ունեցած են՝ «Կարտըն Թաուըր»ի Երկուշաբթիները վերածելու մտաւորական մնայուն ժամադրավայրի:

Լիբանանահայ արուեստագետներու համախմբումը, կազմակերպական կառոյց մը ստեղծելու ոչ համոզիչ փորձէ մը ետք, կը պահէ իր համախմբումի հանգամանքը՝ առանց վարչական կազմի ու պիւտճեական մտահոգութիւններու, իբրեւ իրարու հաւասար անդամներէ կազմուած ու համաձայնական որոշումներով առաջնորդուող ժրջան ու արդիւնաւետ խմբակցութիւն: Վերջին երեք տարիներուն Լիբանանի քաղաքական ու ապահովական տագնապները արգելք չեն ըլլար շաբաթական հանդիպումներու կանոնաւոր շարունակութեան, թէեւ աւելի սեղմ շրջանակի մէջ, միայն բացառիկ պարագաներուն մամուլի մէջ նախապէս յայտարարելով կարգ մը ելոյթներ: Բնականաբար այս ժամանակաշրջանի գրոյցներուն գլխաւոր առանցքը կ'ըլլայ Լիբանանի քաղաքական վտանգաւոր կացութիւնը, ինչպէս նաեւ անոր հաւանական ազդեցութիւնը՝ լիբանանահայ համայնքին ներկայի ու ապագայի գոյավիճակին:

Շաբաթական գրոյցներու նիւթերուն կարճ ցանկը կը շարունակէ ընդգրկել հետեւեալ ազգային հրատապ հարցերը.

- Հայաստան - Սփիւռք փոխարաբերութիւններու դրական ու գործնապաշտ կարգաւորումը ի նպաստ Հայաստանի տնտեսական բարգաւաճման ու աշխարհատարած հայկական համայնքներու ինքնութեան պահպանման ու պատմական իրաւունքներու պաշտպանման:
- Սփիւռքի հայկական համայնքներուն վերակազմաւորումը՝ քաղաքական, ընկերային ու տնտեսական աւելի գրաւիչ ու գործնապաշտ ազգային գաղափարախօսութեան մը ծիրին մէջ, իրագործելու համար յստակօրէն սահմանուած հաւաքական նպատակներ, յարմարաւետ միջոցառումներով:
- Տեղասպանութեան միջազգային ճանաչումի արագընթաց թափը նկատի առնելով՝ հաւաքական աշխատանքի ծիրին ընդլայնումն ու համակարգումը, կեդրոնանալով Հայաստանի ռազմավարական ապահովութեան ու միջազգային օրէնքի գործադրութեան կարելիութիւններուն վրայ:
- Հայաստանի Հանրապետութեան երկքաղաքացիութեան օրէնքին առաւելութիւններն ու անպատեհութիւնները՝ Հայաստանի ու Սփիւռքի տարագիր հայկական համայնքներուն համար ու անոր իրապաշտ ու գործնապաշտ կազմակերպումն ու գործադրումը:
- Սփիւռքի տարագիր հայկական համայնքներուն ներկայացուցչական կեդրոնական կառոյցի մը ստեղծման անհրաժեշտութիւնը՝ համագործակցաբար Հայաստանի պետական վարչամեքենային հետ՝ հետապնդելու համար համահայկական անկորնչելի իրաւունքները միջազգային ատենաներու առջեւ:

Լիբանանահայ արուեստագետներու համախմբումը կազմաւորուեցաւ իբրեւ բնական կարիք ու դրական, կառուցողական մտածողութեան ու պատասխանատու արտայայտութեան ազատ բեմ՝ իր համեստ ներդրումը բերելու արուեստի ու ազգային հիմնահարցերու քննարկման մարզերուն մէջ, մտաւորական գոհունակութեան մթնոլորտի ստեղծումով:

Խմբական մտերմիկ գրոյցներու ընթացքին ազգային գերագոյն նպատակներու անորոշութեան յաճախակի քննարկումը երբեմն մեզ խորասուզեց անհեթեթի մութ խորշերը, եւ տրամաբանական մտածողութեան սահմանափակ կարելիութիւնները առաջնորդեցին դէպի գոյութենական ու արժեքաբանական ad nauseum հարցադրումներու, բայց միշտ կարելի եղաւ վերանորոգուիլ, առանց բացառելու այն հաւանականութիւնը, որ Ամազոնի անտառներուն մէջ մրջինի մը գոյամարտը ըլլայ նոյնքան անիմաստ, որքան՝ տիեզերքի գոյութիւնը:

Չորս հարիւր քսան Երկուշաբթիները եղան առաւելաբար հարցադրումներու երկար ժամեր: Ազգային հիմնահարցերը տակաւին կը մնան անլուծելի հանգոյցներ: Սակայն սոսկ անոնց հաւաքական արծարծումը կարելի է նկատել հաւաքական պատասխանատուութեան նուազագոյն զգացում եւ յոյսի ու հաւատքի շող մը՝ այլապէս համատարած ծանծաղ առօրեաները լուսաւորող:

Տասնամեակի այս հանգրուանին գնահատանքի ու շնորհակալության խօսքս կ'ուղղեմ վերոյիշեալ հայրենի, սփիւռքահայ ու լիբանանցի արուեստագետներուն ու մտաւորականներուն, որոնցմէ շատեր բազմաթիւ աշիթներով իրենց աշխուժ մասնակցութիւնը բերին համախմբումի շարժումին, յաճախ՝ մասնագիտական բարձր մակարդակի ելոյթներով, բազմաձայն ազատ զրոյցներուն իրենց կարծիքը արտայայտելով, հակաճառելով, քննադատելով, ինչպէս նաեւ՝ բոլոր անոնց, որոնք ներկայ եղան իբրեւ պարզ ունկնդիր՝ չորս հարիւր քսան երկուշաբթիներէն շատերուն կամ առնուազն մէկուն:

ՄԿՐՏԻՉ Լ. ՊՈՒՆՏՈՒՔԵԱՆ